| ԴԱՏԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ 2022-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԲԽՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Հաշվետու ժամանակաշրջան | 2024 թվականի 1-ին կիսամյակ | | | | | |
| ՆՊԱՏԱԿ 5. ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ | | | | | | |
| Վերջնական արդյունք | Իրականացվել են քրեական արդարադատության ոլորտում ձեռնարկված արմատական բարեփոխումները | | | | | |
| **Գործողություն** | **Թիրախ** | **Կատարման ժամկետ** | **Կարգավիճակ** | **Նշումներ** | **Ֆինանսական աղբյուր** | **Ստուգման միջոց** |
| 5.7. Կազմակերպել Քրեակատարողական ծառայությունում և Պրոբացիայի ծառայությունում բարեվարք և պրոֆեսիոնալ անձնակազմ ունենալու համար համապատասխան ծառայողների պատրաստումներ | Քրեակատարողական ծառայությունում բարեվարք և պրոֆեսիոնալ անձնակազմ ունենալու համար պատրաստվել են քրեակատարողական ծառայողներ | 2024 թվականի 1-ին կիսամյակ | Կատարված | Արդարադատության նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 784-Ա հրամանով (Հավելված 1, 2, 3) հաստատվել են Քրեակատարողական ծառայության գլխավոր, առաջատար, միջին և կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնող քրեակատարողական ծառայողների 2024 թվականի վերապատրաստման դասխոսությունների և գործնական պարապմունքների ցանկերը, որոնք ներառում են «Քրեակատարողական ծառայողի մասնագիտական էթիկա և բարեվարքություն» թեմայով մոդուլը: 2024 թվականի 1-ին կիսամյակի դրությամբ վերապատրաստում անցնող քրեակատարողական ծառայողների քանակը շուրջ 400-ն է: Պրոբացիայի ծառայության թվով 53 ծառայող վերապատրաստում է անցել «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «Բարեվարքություն» թեմայով: | | Տրվել են վերապատրաստումներին մասնակցելու վերաբերյալ հավաստագրեր: |

| **Արդյունքային ցուցանիշ** | **Առկա ցուցանիշ** | **Արդյունքին հասնելու ժամկետ** | **Ցուցանիշի թիվը** | | **Նշումներ** | **Տվյալների հավաքման միջոց** |
|---|---|---|---|---|---|---|
| 5.7.1. Քրեակատարողական ծառայությունը համալրվել է տեսական և գործնական պատրաստում և բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրության իրականացում անցած ծառայողներով | | 2024 թվականի 1-ին կիսամյակ | **Նախատեսված** | 200 | Արդարադատության նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 784-Ա հրամանով (Հավելված 1, 2, 3) հաստատվել են Քրեակատարողական ծառայության գլխավոր, առաջատար, միջին և կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնող քրեակատարողական ծառայողների 2024 թվականի վերապատրաստման դասխոսությունների և գործնական պարապմունքների ցանկերը, որոնք ներառում են «Քրեակատարողական ծառայողի մասնագիտական էթիկա և բարեվարքություն» թեմայով մոդուլը: 2024 թվականի հունիսի 2-րդ տասնօրյակի դրությամբ վերապատրաստում անցնող քրեակատարողական ծառայողների քանակը շուրջ 400-ն է: | Վերապատրաստումների բավարարվածության հարցումներն առկա են: |
| | | | **Փաստացի** | 400 | | |
| | | | **Շեղում** | | | |
| 5.7.2. Պրոբացիայի ծառայությունը համալրվել է տեսական և գործնական պատրաստում և բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրության իրականացում անցած ծառայողներով | | 2024 թվականի 1-ին կիսամյակ | **Նախատեսված** | 50 | Պրոբացիայի ծառայության թվով 53 ծառայող վերապատրաստում է անցել «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «Բարեվարքություն» թեմայով: | Տրվել են «Բարեվարքություն» թեմայով վերապատրաստմանը մասնակցելու վերաբերյալ հավաստագրեր: |
| | | | **Փաստացի** | 53 | | |
| | | | **Շեղում** | | | |

| Գործողություն | Թիրախ | Կատարման ժամկետ | Կարգավիճակ | Նշումներ | Ֆինանսական աղբյուր | Ստուգման միջոց |
| --- | --- | --- | --- | --- | --- | --- |
| 5.8. Մշակել էլեկտրոնային արդարադատության գործիքների ներդրման հիման վրա Քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ նախատեսող նորմատիվ իրավական ակտի նախագիծ | Մշակվել է Քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ նախատեսող նորմատիվ իրավական ակտի նախագիծ | 2024 թվականի 1-ին եռամսյակ | Չկատարված | Ներկայումս իրականացվում են էլեկտրոնային դատարանի քրեական մոդուլի տեխնիկական առաջադրանքի լրամշակման և բիզնես քեյսի ամողջականացման աշխատանքներ, որի շրջանակներում և դրան զուգահեռ, Համաշխարհային բանկի աջակցությամբ, ապահովվելու է (արդեն իսկ առկա է նախագծի նախնական տարբերակը) նաև դատական վարույթի մասով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ամբողջական հարմոնիզացիան թվայնացման տրամաբանությանը՝ ըստ անհրաժեշտության խմբագրելով նաև մինչդատական վարույթի մասով առկա կարգավորումները: | | Առկա չէ ստուգման միջոց: |

| Արդյունքային ցուցանիշ | Առկա ցուցանիշ | Արդյունքին հասնելու ժամկետ | Ցուցանիշի թիվը | | Նշումներ | Տվյալների հավաքման միջոց |
| --- | --- | --- | --- | --- | --- | --- |
| 5.8.1. Քրեական վարույթի շրջանակներում իրականացվող դատական գործառույթներն իրականացվում են էլեկտրոնային եղանակով | | 2024 թվականի 1-ին կիսամյակ | Նախատեսված | 20 | Քրեական վարույթի շրջանակներում իրականացվող դատական գործառույթները դեռևս  էլեկտրոնային եղանակով չեն իրականացվում: | Առկա չէ տվյալների հավաքման միջոց |
| | | | Փաստացի | 0 | | |
| 5.8.2. Քրեական դատավարական գործողությունները իրականացվում են էլեկտրոնային եղանակով | | 2024 թվականի 1-ին եռամսյակ | Նախատեսված | 3 | Քրեական դատավարական գործողությունները դեռևս  էլեկտրոնային եղանակով չեն իրականացվում: | Առկա չէ տվյալների հավաքման միջոց: |
| | | | Փաստացի | 0 | | |
| | | | Շեղում | | | |

**ՆՊԱՏԱԿ 11. ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ**

| Վերջնական արդյունք | Բարձրացել է կատարողական վարույթի արդյունավետությունը, մեծապես երաշխավորված է դատական պաշտպանության իրավունքի անբաժանելի մաս հանդիսացող՝ դատական ակտերի կատարման իրավունքի, ինչպես նաև հարկադիր կատարման ենթակա այլ ակտերի հարկադիր կատարման կենսագործումը |
| --- | --- |

| Գործողություն | Թիրախ | Կատարման ժամկետ | Կարգավիճակ | Նշումներ | Ֆինանսական աղբյուր | Ստուգման միջոց |
| --- | --- | --- | --- | --- | --- | --- |

<table>
<tr><td>11.7. Ապահովել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության անձնակազմի վերապատրաստումն ու իրազեկումը</td><td colspan="2">Կազմակերպվել և անցկացվել են Հարկադիր կատարումն ապահովող ծառայության աշխատակիցների վերապատրաստման դասընթացներ և իրազեկվածության ապահովմանն ուղղված միջոցառումներ</td><td>2024 թվականի 1-ին կիսամյակ</td><td>Կատարված</td><td>Հարկադիր կատարումն ապահովող ծառայության ամբողջ անձնակազմը մասնակցել է Ծառայության կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին, որոնք վերաբերում են հարկադիր կատարման ոլորտում նոր գործիքակազմերի կիրառության առանձնահատկություններին ու տեխնիկական հնարավորություններին. մասնավորապես՝ Ծառայության կատարողական վարույթների միասնական էլեկտրոնային համակարգի կատարելագործված գործիքակազմի կիրառություն, Ծառայության փաստաթղթաշրջանառության նոր էլեկտրոնային համակարգի գործիքակազմի կիրառություն: Ընդ որում, հարկադիր կատարողները մասնակցել են հատուկ ուսուցման դասընթացներին, այդ թվում՝ «Թիրախային տեխնիկական աջակցություն Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումներին» ծրագրի շրջանակներում «Վարչական վարույթի և վարչական դատավարության վերաբերյալ» սեմինարին: Միաժամանակ, հաստատվել է Արդարադատության նախարարի 2023 թվականի նոյեմբերի 13 N 667-Լ հրամանը՝ «Հարկադիր կատարման ծառայության գործառույթների արդյունավետ իրականացմանն ուղղված հատուկ մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների զարգացման համար անհրաժեշտ վերապատրաստման կարգը սահմանելու մասին», որի համաձայն հարկադիր կատարողները, ըստ գրաֆիկի անցնում են պարտադիր վերապատրաստում՝ ներառելով նաև «Կատարողական վարույթի մասին» օրենքով նախատեսված բարեփոխումներին վերաբերող թեմաների ընդգրկմամբ: 2024 թվականի հունիսի 1-ին տասնօրյակի դրությամբ հատուկ մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների զարգացմանն ուղղված վերապատրաստումներին մասնակցել է շուրջ 60 հարկադիր կատարող: Վերապատրաստումները կրում են շարունակական բնույթ:</td><td></td><td>Վերապատրաստման դասընթացների մոդուլներն ու վերապատրաստումներին մասնակցած հարկադիր կատարողների բավարարվածության հարցումներն առկա են:</td></tr>
<tr><th>Արդյունքային ցուցանիշ</th><th>Առկա ցուցանիշ</th><th>Արդյունքին հասնելու ժամկետ</th><th colspan="2">Ցուցանիշի թիվը</th><th colspan="2">Նշումներ</th><th>Տվյալների հավաքման միջոց</th></tr>
<tr><td rowspan="3">11.7.1. Հարկադիր կատարումն ապահովող ծառայության անձնակազմը վերապատրաստվել է՝ ըստ իրականացված բարեփոխումների ուղղությունների և աշխատակիցների գործառույթներին դրանց առնչության</td><td rowspan="3"></td><td rowspan="3">2024 թվականի 1-ին կիսամյակ</td><td>Նախատեսված</td><td>60</td><td colspan="2" rowspan="3">Հարկադիր կատարումն ապահովող ծառայության ամբողջ անձնակազմը մասնակցել է Ծառայության կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին, որոնք վերաբերում են հարկադիր կատարման ոլորտում նոր գործիքակազմերի կիրառության առանձնահատկություններին ու տեխնիկական հնարավորություններին. մասնավորապես՝ Ծառայության կատարողական վարույթների միասնական էլեկտրոնային համակարգի կատարելագործված գործիքակազմի կիրառություն, Ծառայության փաստաթղթաշրջանառության նոր էլեկտրոնային համակարգի գործիքակազմի կիրառություն: Ընդ որում, հարկադիր կատարողները մասնակցել են հատուկ ուսուցման դասընթացներին, այդ թվում՝ «Թիրախային տեխնիկական աջակցություն Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումներին» ծրագրի շրջանակներում «Վարչական վարույթի և վարչական դատավարության վերաբերյալ» սեմինարին: Միաժամանակ, հաստատվել է Արդարադատության նախարարի 2023 թվականի նոյեմբերի 13 N 667-Լ հրամանը՝ «Հարկադիր կատարման ծառայության գործառույթների արդյունավետ իրականացմանն ուղղված հատուկ մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների զարգացման համար անհրաժեշտ վերապատրաստման կարգը սահմանելու մասին», որի համաձայն հարկադիր կատարողները, ըստ գրաֆիկի անցնում են պարտադիր վերապատրաստում՝ ներառելով նաև «Կատարողական վարույթի մասին» օրենքով նախատեսված բարեփոխումներին վերաբերող թեմաների ընդգրկմամբ: 2024 թվականի հունիսի 1-ին տասնօրյակի դրությամբ հատուկ մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների զարգացմանն ուղղված վերապատրաստումներին մասնակցել է շուրջ 60 հարկադիր կատարող: Վերապատրաստումները կրում են շարունակական բնույթ:</td><td rowspan="3">Վերապատրաստման դասընթացների մոդուլներն ու վերապատրաստումներին մասնակցած հարկադիր կատարողների բավարարվածության հարցումներն առկա են:</td></tr>
<tr><td>Փաստացի</td><td>60</td></tr>
<tr><td>Շեղում</td><td></td></tr>
</table>